



Ս Փ Յ ՈՒ Ռ Բ ՈՒ Մ

ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ԿՅԱՆՔ

ՎԱՇԻՆԳՏՈՆԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ
ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ՕՏՈՒՄԸ

1963 թվականի նոյեմբերի 10-ի կիրակին եղել է անմուշանայի և հիշատակելի օր Ամերիկայի հայոց թեմի և մասնավորապես Վաշինգտոնի հայերի համար: Առաջին անգամը լինելով, Ամերիկայի Միացյալ Նահանգների մայրաքաղաքում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ունենում էր իր վայելուչ աղոթատունը և ազգային սրահը:

Երբաթ, նոյեմբերի 9-ին, թեմակալ առաջնորդ գերաշնորհ Ս. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը Վաշինգտոն է ժամանել, ընկերակցությամբ առաջնորդական փոխառորդ հոգեշնորհ Ս. Եղիշե վարդապետ Կիլիրյանի և արժանապատիվ Ս. Լևոն քահանա Առաքելյանի և նախագահել նորակառույց եկեղեցու նավակառույց և կիրական տնային արարողությանը:

Հաջորդ օրը, կիրակի, նոյեմբերի 10-ին, առաջնորդ սրբազան հայրը, իր շուրջն ունենալով հոգևորական դասուն, կատարել է նորակառույց եկեղեցու օծումը և օծման կնքահայր պր. Նշան Հինդլանի ու նրա տիկնոջ փափագին ընդառաջելով, եկեղեցին կոչել Ս. Աստվածածին:

Տաճարը լիքն է եղել խուռներամ հավատացյալներով: Սուրբ պատարագի ներդաշնակ երգեցողությունը կատարել է տեղի երգչախումբը, ղեկավարությամբ պր. Երվանդ Սուրյանի: «Հայր մեր»-ից առաջ առաջնորդ սրբազանը իր քարոզում վեր է առել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դերը պատմության ընթացքում և նրա կարևորությունը Ամերիկայի հայության համար և մանավանդ երկրի մայրաքաղաքում, որտեղ մի խումբ հայեր ցանկացել են վառ պահել Ս. Գրիգոր Լուսավորչի կանթեղը:

Հավարտ սուրբ պատարագի, եկեղեցու ներքնասրահում տեղի է ունեցել ճաշկերույթ նորակառույց եկեղեցու օծման առթիվ: Ճաշկերույթին մասնակցել են բազմաթիվ հավատացյալներ: Ճաշկերույթի ընթացքում խոսողները վեր են առել կատարված գեղեցիկ գործի արժեքը և ժողովրդի կոհողության բաժինը:

Թող Ցերը օրհնի հիշատակը և ողորմի «Եկեղեցի շինողաց, երախտատարաց, պտղատուից և այնոցիկ որք ընդ հովանեաւ սրբոյ եկեղեցուլ են հանգուցեալ»:

ՍՓՅՈՒՌԱԶԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԲԵՐԲԵՐՅԱՆԻ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԵՐԳԸ ՆՅՈՒՑՈՐՔՈՒՄ

1963 թվականի հոկտեմբերի 27-ին, կիրակի, սփյուռքահայ անվանի կոմպոզիտոր Համբարձում Բերբերյանը, Ամերիկայի հայոց արևելյան թեմի առաջնորդարանի օժանդակ միության նախաձեռնությամբ և թեմակալ առաջնորդ գերաշնորհ Ս. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի նախագահությամբ, Նյու-Յորքի Հունտեր կոլեջի հանդիսասրահում, առաջնորդարանի «Կոմիտաս» և Նյու-Ինգլենդի երգչախմբերի և 25 հոգուց բաղկացած նվագախմբի մասնակցությամբ տվել է հեղինակային ճոխ համերգ, որին ներկա է եղել ավելի քան հազար հոգի:

Համերգն սկսվել է Սիլվա Կապուտիկյանի «Խոսք իմ որդուն» բանաստեղծության վրա հորինված խմբերգով, որը ողջունվել է բուռն ծափահարություններով:

Ֆլորա Մարտիկյանը երգել է «Ուրախ լեր» ջարականը և «Աչքերդ» մեներգը, դաշնամուրի ընկերակցությամբ Մարգարիտ Զյուրբջյանի, որից հետո երգչախումբը և նվագախումբը կատարել են «Սարերի աղջիկ»-ը: Մարգարիտ Պապիկյանը երգել է Վահան Թեքեյանի «Կանծրեք, տղաս» բանաստեղծության վրա դաշնավորված մեներգը:

Հայտագրի առաջին մասի վերջում, երգչախմբի և նվագախմբի կատարմամբ, հնչել է «Խորհուրդ Վարդանանց» կանտատան, որի մեջ մեներգի բաժիններ են վերցրել Դորիս Ահարոնյանը (սոպրանո), Ֆլորա Մարտիկյանը (մեցցո-սոպրանո), Վարուժան Արսլանյանը (տենոր) և Ջորջ Հարությունյանը (բաս):

Համերգի երկրորդ մասն սկսվել է Ազնես Հակոբյանի կատարմամբ «Սեր մը գաղտնի» մեներգով, որից հետո հանդես են եկել Մերի Մելվինսկայանը և Վարուժան Արսլանյանը «Ոսկի երազ» զուգերգով:

Կոմպոզիտորի որդի Վահե Բերբերյանը թամբուրակի վրա վարպետորեն կատարել է «Աղաջիո քանթաթիլե և ըն սպիրտո» կոնցերտը:

Ապա նվագախմբի ընկերակցությամբ կատարվել է Եղիշե Չարենցի «Գովը Հայաստանի» բանաստեղծության վրա հորինված խմբերգը, որը բուռն ծափերի ներքո կրկնվել է:

«Թեզուլ քու քաջըն մարքրիտ տան» և «Ջմրուխտ սարերից հովեր կուգան» մենեդգերից հետո երգչախումբը կատարել է մի հատված «Արեգնապան» օպերայից՝ «Դառնում է կովից իշխան Թաթուլը», որից հետո կատարել է «Հայոց Համբարձումը» խմբերգը («Հոյնար»)։

Նույն օրը, ժամը 7-ին, Նյու-Յորքի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հանդիսասրահում, ի պատիվ կոմպոզիտոր և խմբավար Հ. Բերբերյանի և երգչախմբի անդամների, տրվել է ճաշկերույթ, որին ներկա է եղել շուրջ 300 հոգի։ Նախագահել է առաջնորդ սրբապան հայրը։

Ճաշկերույթի ընթացքում խոսք են առել եկեղեցու հովիվ Ս. Կարեն քահանա Կոստյանը և թեմական խորհրդի ատենապետ Ս. Աննակ քահանա Գասպարյանը։ Հուլու-

մով խոսել է կոմպոզիտոր Հ. Բերբերյանը, որն անդրադարձել է առիաստարակ հայ մշակույթի և մասնավորապես հայ երգի և երաժշտության ունեցած դերի մասին հայ ժողովրդի կյանքում։ Նա խոսել է Երևանում տված իր հեղինակային համերգի մասին և վերջում հաղորդել, թե Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստրության պատվերով, արդեն իսկ ձեռնարկել է հորինելու «Վարդանանք» օպերան։

Առաջնորդ սրբապան հայրը շնորհավորել է կոմպոզիտորին և երգչախմբի անդամներին հաջող համերգի համար և օրհնել բոլոր նրանց, ովքեր իրենց մասնակցությունն են բերել հայ մշակույթի փառատոնի առթիվ տրված այս համերգին։

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԿՅԱՆՔ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՏԻՐԱՅՐ ՎԱՐԻԱՊԵՏԻ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ռումանահայ և բուլղարահայ թեմերու բարեխնամ առաջնորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյան 1963 թվականի սեպտեմբեր 23-ին Սոֆիա ժամանեց Ռուսեն, ուր պատարագած էր օր մը առաջ Բուլբուշեն գալով։

Առաջնորդ հայր սուրբը օգնականականին մեջ ընդունվեցավ թեմական խորհուրդի և եկեղեցական վարչության ներկայացուցիչներու կողմն։ Նույն օրը առաջնորդ հայր սուրբը նախագահեց թեմական խորհուրդի նիստին, ուր ընկվեցան թեմական կարևոր հարցեր։

Ընդառաջելով Պլովդիվի եկեղեցական վարչության խնդրանքին, Տ. Տիրայր վարդապետ սեպտեմբեր 28-ին նույն քաղաքը այցելեց ու հաջորդ օրը՝ 29 սեպտեմբեր կիրակի, պատարագեց ու քարոզեց տեղվույն եկեղեցիին մեջ Ս. Գևորգի տոնին առթիվ, որ եկեղեցվո անվան տոնն է։ Առաջնորդ հայր սուրբը իր կուռ քարոզով մխիթարեց եկեղեցին ու բակը լեցնող խումներամ հավատացյալները ու օրհնեց մատաղը։

Նույն երեկո, Սոֆիայի ճամբով Բուլբուշ վերադարձավ հայր սուրբը, կայարանին մեջ ողջերթ մաղթող պաշտոնական մարմիններու ներկայացուցիչներն հրաժեշտ առնելով։

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ 250-ԱՄՅԱԿԸ ՍՈՖԻԱՅԻ ՄԵՋ

Խաղաղության բուլղարական ազգային կոմիտեի, Բուլղար-սովետական բարեկամության համաժողովրդական կոմիտեի, բուլղար գրողներու միության և բուլղարահայ «Երևան» մշակութային միության նախաձեռնությամբ, 1963 նոյեմբեր 2-ին, Սոֆիայի բուլղար-սովետական բարեկամության տան մեջ, տոնվեցավ հայ հանճարեղ բանաստեղծ-երգիչ, մեծ մարդասեր Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը։

Բեմին վրա Վենետիկած էր հայ ժողովուրդի անմահ վավակի գունազեղ մեծադիր նկարը։

Նախագահության սեղանի շուրջը տեղ գրաված էին նախաձեռնող պաշտոնական մարմիններու ներկայացուցիչները, ինչպես նաև Խաղաղության սովետական կոմիտեի պատասխանատու քարտուղար Մ. Կոտովը և Սոֆիայի սովետական դեսպանատան քարտուղար Ա. Բիրյուկովը։

Նախագահող հայտնի գրող Մ. Իսակի բացման խոսքերն հետո, Սայաթ-Նովայի կյանքն ու գործունեությունը վերլուծեց հայտնի բանաստեղծ Լամար (Լայու Մարի-նով)։

Գեղարվեստական հայտագրին մեջ տեղ գտած էին անմահ երգչի ստեղծագործական կտորները, որոնք արտաբանվեցան ու երգվեցան հաջող կերպով։ Արտասանվեցավ նույնպես Սայաթ-Նովայի «Զամանչա» բանաստեղծության ռուսերեն թարգմանությունը (Վ. Բիրյուկով)՝ վաստակավոր արտիստուհի Տանյա Մասալիտինովայի կողմն։ Բոլոր կատարողները գնահատվեցան բուռն ծափահարություններով, լեցուն սրահը հուլելով։

Խոսնակ Մ. Պողոսյան մեծ ձեռնհասությամբ տվավ հայերեն յուրաքանչյուր արտասանության և երգի բուլղարերեն ամփոփումը, մեծ գոհունակություն պատճառելով բազմաթիվ բուլղար հանդիսականներուն։

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ «ԵՐԵՎԱՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՒՆՐԱՐՈՎԳՐԱԴԻ ԵՐԳԻ ԵՎ ՊԱՐԻ ԱՆՍԱՄԱԲԼԻ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Բուլղարահայ «Երևան» մշակութային միության Կուլարովգրադի մասնաճյուղի երգի և պարի անսամբը իր գեղարվեստական բարձր մակարդակով գրաված է ամբողջ հայ գաղութի համակրանքը։ Եվ ոչ միայն հայ գաղութ։

Հալիվ 500 հոգի համրող հայ գաղութի յուրաքանչյուր ընտանիքն հավաքված երկսեռ երգիչներով, պարողներով ու նվագողներով կազմված անսամբը ունի շուրջ ութսուն երկսեռ անդամներ։ Անսամբին մեջ կարելի է տեսնել երկու եղբայրներ, բուլբուշ, ծնողներ և զավակներ, որոնք անձնվեր աշխատանքով խումբը կպահեն բարձր մակարդակի վրա։ Կուլարովգրադի շրջանի հայ, բուլղար,

թուրք բնակչությունը աչքի լույսի պես կգուրգուրա հայկական անսամբլին վրա, որու հայտագրին մեջ տեղ գտած են առավելապես հայկական, բուլղարական, ռուսական և ադրբեջանական երգեր ու պարեր:

Անսամբլը արժանացած է ռեսպուբլիկական ֆեստիվալի առաջնության ու կրկնակի մեդալակիր է:

Ահա այս անսամբլը 1963 տարվան նոյեմբեր 10-ին Պլովդիվի և հաջորդ օրը, նոյեմբեր 11-ին, Սոֆիայի պետական երաժշտական թատրոնի սրահին մեջ փայլուն հաջողությամբ համերգ տվավ:

Ինչպես Պլովդիվի 700, նույնպես և Սոֆիայի 1100 տոմսերը օրեր առաջ սպառեցան ու շատեր ոտքի մնացին:

Անպատմելի խանդավառության մթնոլորտի մեջ անսամբլի համարներեն շատեր կրկնվեցան ներկաներու բուռն փափագով:

Անսամբլի բարձր որակին զլխավոր ղեկավարն է պարի մասնագետ Սիրվարդ Չիլինկիրյան, շքանշանակիր, որ ներկայիս Երևան կգտնվի իր գիտելիքները թարմացնելու և ճոխացնելու համար:

Համերգի խոր տպավորության տակ, հայ և բուլղար հանդիսականներ անհամբեր կսպասեն անսամբլի հաջորդ այցելության:

ԹՂԹԱԿԻՑ

ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ԿՅԱՆՔ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ 250-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՒՆԱՐԵՍԻՍԻ ՄԵԶ

1963 թվականի նոյեմբերի 14-ին, Բուխարեստ քաղաքի պատմության թանգարանի հանդիսատսահում, տեղի ունեցավ հայ ժողովրդի հանճարեղ վավակ, բանաստեղծ-երգիչ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի տոնակատարությունը, նախածննդությամբ Ռումինիայի պատմա-բանասիրական ուսումնասիրությանը ընկերության արևելագիտական բաժանմունքի:

Հանդիսության ներկա էին ռումին արվեստի և գրականության բազմաթիվ ներկայացուցիչներ և հայ հասարակությունը:

Արևելագիտական բաժանմունքի նախագահ Միհայիլ Գուբոլյուն կատարեց բացման խոսքը: Նախագահի հրավերով, հոտնկայա լռությամբ հարգվեց ռումին անվանի հայագետ ողբացյալ պրոֆ. Վլադ Բընդեանուի հիշատակը, որ առաջին նախագահն էր բաժանմունքի: Կարդացվեցին պրոֆ. Վ. Բընդեանուի մահվան առթիվ բաժանմունքին ուղղված ցավակցական հեռագրերը:

Միհայիլ Գուբոլյուն խոսեց «Սայաթ-Նովայի դերը ժողովուրդներու եղբայրության շաղախման մեջ» նյութի շուրջ:

Բաժանմունքի անդամ տիկին Էջեմիու Պոպեսկու-Օուտեցը խոսեց «Ժողովրդական երգիչները Արևելքի մեջ, հայ երգիչներ Գողթան գուսաններեն մինչև մեր օրերու աշուղները, նվագարանները, որ գործածած են անոնք, բանաստեղծական ձևերը, որոնցմով հորինած են իրենց երգերը, եղանակները, որոնցմով այդ երգերը կատարված են և հայ ժողովրդական երաժշտության հետքերը Սայաթ-Նովայի երգերում մեջ» շահեկան նյութի շուրջ:

Բաժանմունքի հայկական ճյուղի վարիչ Հ. Ճ. Սիրունին խոսեց «Սայաթ-Նովայի կյանքն ու գործը, Սայաթ Նովայի լեզուն, ոճը և արվեստը, Սայաթ-Նովա իբրև սիրո երգիչ, բնությունը Սայաթ-Նովայի երգերում մեջ, հասարակական տարրերը Սայաթ-Նովայի ստեղծագործության մեջ, Սայաթ-Նովա իբրև Կովկասյան ժողովուրդներու երգիչ, համամարդկային լարը Սայաթ-Նովայի երգերում մեջ» հետաքրքրական նյութի շուրջ, որը լսվեց մեծ ուշադրությամբ:

Հանդիսության վերջում տեղի ունեցավ գեղարվեստական բաժին, որին իր մասնակցությունը բերեց օպերայի մեներգչուհի Արաքս Սվաճյանը, երգելով Սայաթ-Նովայի երեք երգերը, ընկերակցությամբ Արսլանյան եղբայրների արևելյան երաժշտական գործիքների:

ԹՂԹԱԿԻՑ

